ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հրապարակված է 07.07.2026թ.
Ամփոփագրում նշված պայմանները
կարող են փոփոխված լինել
Հեռ. (+374 10) 510 510, www.inecobank.am

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ «ԸՆԹԱՑԻԿ» ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՊԼԱՆ
(ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ)

Ծառայություն / Փաթեթ	basic	plus	special
Հաշվի բացում ***(վճարվում/գանձվում է միանվագ՝հաշվի բացման պահին)***	ՀՀ դրամով ընթացիկ հաշիվ (այսուհետ՝ Հաշիվ) ՀՀ ռեզիդենտ հաճախորդների համար՝ • 3,000 ՀՀ դրամ • անվճար՝ Բանկում ժամկետային ավանդ ներդնելու, Բանկի կողմից թողարկված պարտատոմսեր ձեռք բերելու, սոցիալական ապահովության հաշվի բացման դեպքում Ոչ ռեզիդենտ հաճախորդների համար՝ • 25,000 ՀՀ դրամ • անվճար՝ սոցիալական ապահովության հաշվի բացման դեպքում		
Հաշվի ամսական սպասարկման վճար	500 ՀՀ դրամ	1,500 ՀՀ դրամ	3,500 ՀՀ դրամ

Փաթեթում ներառված անվճար ծառայություններ	• ԱՄՆ դոլարով, եվրոյով, ռուբլիով ընթացիկ հաշիվներ[1] • ՀՀ դրամով խնայողական հաշիվ[2] • ՀՀ դրամով MasterCard Standard կամ Visa Classic մեկ հաշվարկային քարտ (օվերդրաֆտի հնարավորությամբ) • ԻնեկոՕնլայն/Մոբայլ Էլեկտրոնային համակարգ[3]	• ԱՄՆ դոլարով, եվրոյով, ռուբլիով ընթացիկ հաշիվներ[1] • ՀՀ դրամով խնայողական հաշիվ[2] • ՀՀ դրամով MasterCard Gold կամ Visa Gold մեկ հաշվարկային քարտ (օվերդրաֆտի հնարավորությամբ) • ԻնեկոՕնլայն/Մոբայլ Էլեկտրոնային համակարգ[3] • Հիփոթեքային վարկի տրամադրման դեպքում Բանկը կատարում է անշարժ գույքի գրավադրման, կադաստրային	• ԱՄՆ դոլարով, եվրոյով, ռուբլիով ընթացիկ հաշիվներ[1] • ՀՀ դրամով խնայողական հաշիվ[2] • ՀՀ դրամով Visa Platinum մեկ հաշվարկային քարտ (օվերդրաֆտի հնարավորությամբ) • ԻնեկոՕնլայն/Մոբայլ Էլեկտրոնային համակարգ[3] • Հիփոթեքային վարկի տրամադրման դեպքում Բանկը կատարում է անշարժ գույքի գրավադրման, կադաստրային գրանցման հետ կապված բոլոր վճարումները[4] • Անվճար մուտքի հնարավորություն օդանավակայանների

[1] Բացվում են հաճախորդի դիմումի համաձայն, բացառությամբ այն դեպքերի, երբ հաճախորդը բացի «Ընթացիկ սակագնային պլանի» փաթեթների շրջանակներում տրամադրվող դրամային արժույթով հիմնական քարտից պատվիրում է նաև այլ արտարժութային քարտ, երբ հաճախորդը ներդնում է արտարժութային ժամկետային ավանդ, երբ հաճախորդը ձեռք է բերում Բանկի կողմից արտարժույթով թողարկված պարտատոմսեր, երբ հաճախորդը դիմում է արտարժութային խնայողական հաշիվ բացելու համար, երբ հաճախորդին տրամադրվում է արտարժութային վարկ: Այս դեպքերում պարտադիր բացվում է նոր պատվիրվող քարտի արժույթով/ նոր ներդրվող ավանդի արժույթով/ նոր ձեռք բերվող պարտատոմսերի արժույթով/ նոր բացվող խնայողական հաշվի արժույթով/ նոր տրամադրվող վարկի արժույթով ընթացիկ հաշիվ: ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի արժույթներից բացի այլ արժույթներով հաշիվների՝ Բանկի մասնաճյուղերում և Կենտրոնական գրասենյակում բացելու դեպքում, սահմանված է 1000 ՀՀ դրամ սակագին՝ յուրաքանչյուրը:

[2] ԱՄՆ դոլարով, եվրոյով, ռուբլիով խնայողական հաշիվները բացվում են անվճար՝ հաճախորդի դիմումի համաձայն:

[3] ԻնեկոՕնլայն համակարգով հաշվի՝ անվտանգության սարքով սպասարկման դեպքում գանձվում է 10,000 ՀՀ դրամ հաշվի սպասարկման միանվագ վճար: Վճարը կիրառվում է յուրաքանչյուր առանձին սարքի տրամադրման համար: Այն դեպքում, եթե ֆիզիկական անձը գրանցված է որպես իրավաբանական անձի/ԱՁ անունից անվտանգության սարքով ԻնեկոՕնլայն էլեկտրոնային համակարգի օգտագործող, ապա միևնույն անվտանգության սարքը կարող է օգտագործել նաև իր հաշիվներով կատարվող գործարքների հաստատման համար: Այս դեպքում անվտանգության սարքով հաշվի սպասարկման միանվագ վճար լրացուցիչ չի կիրառվում: Անվտանգության սարքի վնասման կամ կորստի դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդից գանձել տուգանք 10,000 ՀՀ դրամի չափով:

		գրանցման հետ կապված բոլոր վճարումները[4] • Արտերկիր մեկնողների աջակցության ապահովագրություն՝15 օր մեկ տարվա ընթացքում[5]	բարձրակարգ սպասասրահներ[6] • Գնումների ապահովագրություն[7] • Ուղեբեռի և թռիչքի ուշացման ապահովագրություն • Միջազգային կոնսիերժ ծառայություն[8] • Բանկի վիրտուալ անհատական մենեջերի ծառայություն
Հաշվի դրական մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%		

[4] Բանկը կատարում է անշարժ գույքի գրավադրման, կադաստրային գրանցման հետ կապված բոլոր վճարումները, եթե հաճախորդը հիփոթեքային վարկի դիմում ներկայացնելիս նվազագույնը 6 ամիս միացած է փաթեթին և յուրաքանչյուր ամիս իր՝ Բանկում գործող հաշիվներին ապահովում է կանոնավոր մուտքեր նվազագույնը հանրագումարային 300,000 ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի չափով, ընդ որում հիփոթեքային վարկի դիմում ներկայացնելիս հաճախորդը չպետք է ունենա Բանկի հանդեպ ժամկետանց պարտավորություններ: Լրացուցիչ գրավադրվելիք գույքի/գույքերի առկայության դեպքում, Բանկը չի կատարում լրացուցիչ գույքի/գույքերի գրավադրման հետ կապված վճարումները:

[5] Յուրաքանչյուր տարի կնքվում է հաճախորդի դիմումի համաձայն:

[6] Օդանավակայանների բարձրակարգ սպասասրահների անվճար մուտքերի քանակի, Fast Track ծառայության անվճար օգտագործման սահմանաչափերի, ինչպես նաև այս ծառայություններից օգտվելիս հյուրերի ներգրավման հնարավորությունների և համապատասխան սակագների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությանը, ինչպես նաև հատուկ առաջարկների և տրամադրվող զեղչերի մասին, կարող եք ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքում՝ https://www.inecobank.am:

[7] Ապահովագրությունը գործում է, եթե ապահովագրական դեպքի ծագման ժամանակ հաճախորդը հանդիսանում է քարտապան և գնման ընդհանուր ծախսի 100%-ը վճարված է VISA Platinum քարտով:

[8] Միջազգային կոնսիերժ ծառայության միջոցով այլ ծառայությունների և ապրանքների ձեռբերման բոլոր ծախսերը հոգում է հաճախորդը:

Կանխիկ գումարի մուտքագրում հաշիվներին	• ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար[9], Եվրո[10]՝ անվճար* • ՌԴ Ռուբլով կանխիկ մուտքագրումը ժամանակավորապես դադարեցված է: * 50,000 ՀՀ դրամ գումարը չգերազանցող ՀՀ դրամով գործարքների համար կիրառելի է սույն փաստաթղթով սահմանված «Կանխիկով դրամարկղային գործառնության սակագինը»:	
Կանխիկ գումարի ելքագրում հաշիվներից[11]	ՀՀ դրամ՝ Մեկ օրացույցային ամսվա ընթացքում մինչև 3,000,000 ՀՀ դրամ) – անվճար, 3,000,000 ՀՀ դրամ սահմանաչափը գերազանցող գումարի համար՝ 0.2%, բայց ոչ պակաս քան 500 ՀՀ դրամ *	ՀՀ դրամ՝ մեկ օրացույցային ամսվա ընթացքում մինչև 5,000,000 ՀՀ դրամ – անվճար, 5,000,000 ՀՀ դրամ սահմանաչափը գերազանցող գումարի համար՝ 0.2%, բայց ոչ պակաս քան 500 ՀՀ դրամ*
	• Եվրո՝ 1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ * • ԱՄՆ դոլար՝ 1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ * • ՌԴ ռուբլի՝ 0.5%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ * * **Սակագինը չի կիրառվում հետևյալ դեպքերում՝** • նախորդ օրացուցային և ընթացիկ տարվա ընթացքում կանխիկով մուտքագրված (բացառությամբ քարտային հաշիվներին) գումարների կանխիկացման դեպքում, եթե գումարը կանխիկացվում է այն արժույթով, որով մուտքագրվել է, • Ինեկոբանկ ՓԲԸ-ի անունից ֆիզիկական անձանց հաշիվներին վճարված գումարների կանխիկացման դեպքում, • Ավանդի/պարտատոմսի դիմում/պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ավանդի/պարտատոմսի գումարի վերադարձման դեպքում, եթե ավանդի պայմանագրային ժամկետը մեծ է 3 ամսից, կամ եթե ավանդի պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի վաղաժամկետ դադարեցումն ընկած ժամանակահատվածը պակաս չէ 3 ամսից:	

[9] Մինչև 2004թ. թողարկված 5,10,20,50 ԱՄՆ դոլար և մինչև 2009թ. թողարկված 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով թղթադրամներ ընդունվում են 1% միջնորդավճարով,սակայն մեկ օրվա ընթացքում մեկ հաճախորդի կողմից մինչև 1,000 ԱՄՆ դոլար թղթադրամի մուտքագրումն անվճար է:
10 500 եվրո անվանական արժեքով թղթադրամները բոլոր դեպքերում ընդունվում են 1% միջնորդավճարով:

[11] Քարտային հաշից կանխիկ գումարի ելքագրման սակագները սահմանվում են տվյալ վճարային քարտերի տրամադրման պայմաններով և սակագներով:

	• Բանկի կողմից մատուցվող այլ ծառայությունների պայմաններով նախատեսված դեպքերում:

«Ընթացիկ» սակագնային պլանի շրջանակներում տրամադրվող Հաշվարկային քարտեր (օվերդրաֆտի հնարավորությամբ)

	basic	plus	special
Քարտատեսակ **Գործառնության տեսակ**	Mastercard Standard Visa Classic	Mastercard Gold Visa Gold	Visa Platinum
Քարտային հաշվի արժույթ	**ՀՀ դրամ**		
Քարտային հաշվի տարեկան սպասարկում	**անվճար**		
Կից քարտերի հնարավորություն [12]	• Հիմնական քարտը Mastercard Standard լինելու դեպքում՝ Mastercard Standard • Հիմնական քարտը Visa Classic լինելու դեպքում՝ Visa Classic	• Հիմնական քարտը Mastercard Gold լինելու դեպքում՝ Mastercard Gold/ Mastercard Standard • Հիմնական քարտը Visa Gold լինելու դեպքում՝ Visa Gold/Visa Classic	Visa Platinum/Visa Gold/Visa Classic
Կից քարտերի ամսական սպասարկման վճար (ՀՀ դրամ)	• 1-ին քարտ անվճար[13]	• 1-ին քարտ անվճար[13]	• 1-ին քարտ անվճար[13]

[12] Կից քարտերի համար գործում են նույն սակագները, ինչ հիմնական քարտերի համար՝ բացառությամբ քարտային հաշվի ամսական սպասարկման վճարի: Հիմնական քարտապանի կողմից կարող է սահմանվել կից քարտից գործարքների կատարման ամսական առավելագույն սահմանաչափ:

[13] Հիմնական քարտի գործողության ընթացքում անվճար կարող է լինել հաճախորդի կողմից պատվիրված միայն առաջին կից քարտը:

	• 2-րդ և հետագա՝ 200	• 2-րդ և հետագա՝ 700	• 2-րդ և հետագա՝ 1,700
Կանխիկի տրամադրում Ինեկոբանկի կանխիկացման կետերում	0%		
Առանց քարտի կիրառման կանխիկի տրամադրում Ինեկոբանկի դրամարկղերում	• ՀՀ դրամ- 0.2%, բայց ոչ պակաս քան 500 ՀՀ դրամ • Եվրո- 1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ • ԱՄՆ դոլար՝ 1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ • ՌԴ ռուբլի-՝ 0.5%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ		
Օրացուցային ամսվա ընթացքում կանխիկի անվճար տրամադրման սահմանաչափ[14] ArCa **համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կանխիկացման կետերում**[15]	500,000 ՀՀ դրամ	750,000 ՀՀ դրամ	1,000,000 ՀՀ դրամ
Օրացուցային ամսվա ընթացքում կանխիկի անվճար տրամադրման սահմանաչափը գերազանցող կանխիկի տրամադրում ArCa **համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կանխիկացման կետերում**[15]	1%		
Կանխիկի տրամադրում ArCa համակարգի միջոցով հավաստագրում չտրամադրող բանկերի կանխիկացման կետերում և ՀՀ տարածքից դուրս[15]	1.5%, բայց ոչ պակաս, քան 1,500 ՀՀ դրամ		
Քարտից քարտ փոխանցում[16]	0%		
Քարտային հաշվից նույն հաճախորդի Ինեկոբանկի այլ բանկային հաշիվներին փոխանցում[16] **(միայն ԻնեկոՕնլայն/ԻնեկոՄոբայլ համակարգերով)**			

[14] Եթե տվյալ օրացուցային ամսվա ընթացքում ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կանխիկացման կետերում հաճախորդի՝ սույն սակագնային պլանի շրջանակներում գործող փաթեթներով տրամադրված հիմնական և դրան կցված բոլոր քարտերով կատարված գործարքների հանրագումարը գերազանցում է տվյալ փաթեթի համար օրացուցային ամսվա ընթացքում նախատեսված կանխիկի անվճար տրամադրման սահմանաչափը դրամը, ապա վերոնշյալ սահմանաչափը գերազանցող գումարի համար սահմանված կանխիկացման սակագինը գանձվում է հաջորդ ամսվա առաջին 3 աշխատանքային օրերի ընթացքում:

[15] Անկախ սույն փաստաթղթով սահմանված սակագներից՝ այլ բանկերը իրենց կողմից սպասարկվող կանխիկացման կետերում կարող են կիրառել լրացուցիչ վճարներ իրականացվող գործարքների համար: Սույն փաստաթղթով սահմանված սակագինը կիրառվում է գործարքի ամբողջական գումարի նկատմամբ, որը ներառում է նաև այլ բանկի կողմից հնարավոր միջնորդավճարները:

[16] ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգերի «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող փոխանցումների համար կիրառվում են սույն փաստաթղթով «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող գործարքների համար սահմանված սակագները, Ինեկոբանկի պաշտոնական կայքի «Առցանց վճարումներ» համակարգով կատարված գործարքների համար կիրառվում են սույն փաստաթղթով «Առցանց վճարումներ» համակարգի միջոցով կատարվող գործարքների համար սահմանված սակագները:

Կատարված գործարքների վերաբերյալ SMS/Viber/WhatsApp հաղորդագրության ուղարկում[17]	Անվճար *Հաճախորդի կողմից այլ հանձնարարական չլինելու դեպքում հաղորդագրությունները ուղարկվում են 1,000 ՀՀ դրամ/ 2 ԱՄՆ դոլար/ 2 Եվրո/125 ռուբլի գումարը գերազանցող գործարքների համար:*		
Քարտի առաքման դեպքում քարտի տրամադրման վճար	անվճար		
Կորցրած կամ վնասված քարտի վերաթողարկում	2,000 ՀՀ դրամ		անվճար
Կորցրած կամ վնասված քարտի հրատապ վերաթողարկում ՀՀ տարածքից դուրս	-	-	Համաձայն Visa միջազգային վճարային համակարգի կողմից "Global Customer Assistance Service (GCAS)" ծառայության սակագների և պայմանների
Կանխիկ գումարի շտապ տրամադրում արտասահմանում	-	-	Համաձայն Visa միջազգային վճարային համակարգի կողմից "Global Customer Assistance Service (GCAS)" ծառայության սակագների և պայմանների

Փոխանցումներ ընթացիկ հաշվից

	basic	plus	special

[17] Եթե Հաճախորդի հեռախոսահամարը տրամադրված չէ ՀՀ-ում գործող օպերատորների կողմից (օտարերկրյա հեռախոսահամար է), ապա Բանկը կարող է քարտային որոշ գործարքների վերաբերյալ հաղորդագրությունները առաջնահերթ ուղարկել Հաճախորդի հեռախոսահամարին «Viber» կամ «WhatsApp» հավելվածների միջոցով, իսկ այդ հավելվածների միջոցով ծանուցման անհնարինության դեպքում՝ SMS հաղորդագրությամբ:

Ներբանկային փոխանցումներ[18]	Անվճար
Միջբանկային փոխանցումներ ՀՀ դրամով[19]	Անվճար
Փոխանցումներ Բյուջե ՀՀ դրամով[20]	Անվճար[21]
Միջբանկային փոխանցումներ արտարժույթով[22] **(Թղթային եղանակով ներկայացված հանձնարարական)**	• ՌԴ ռուբլի՝ 0.1%, նվազագույնը 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը 40,000 ՀՀ դրամ • ԱՄՆ դոլար, Եվրո և այլ արտարժույթ OUR՝ 0.2% նվազագույնը 12,000 ՀՀ դրամ, առավելագույնը 60,000 ՀՀ դրամ
Միջբանկային փոխանցումներ արտարժույթով՝ ՀՀ տարածքում (Թղթային եղանակով ներկայացված հանձնարարական)	• 0.1% նվազագույնը 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը 10,000 ՀՀ դրամ
Միջբանկային «Շտապ» փոխանցումներ (նույն գործառնական օրվա ընթացքում) Թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների դեպքում	• ՀՀ դրամ՝ 2,000 ՀՀ դրամ լրացուցիչ միանվագ վճար • Արտարժույթ՝ 5,000 ՀՀ դրամ լրացուցիչ միանվագ վճար
Միջբանկային փոխանցումներ (Հեռակառավարման համակարգերով ներկայացված հանձնարարական)	Միջբանկային փոխանցումների համար թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների սակագների նկատմամբ 20% ցածր սակագին (այդ թվում Guaranted OUR, BEN տարբերակով փոխանցումների, ՀՀ տարածքում արտարժույթով միջբանկային փոխանցումների և «Շտապ» փոխանցումների համար)

[18] ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգերի «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող փոխանցումների համար կիրառվում են սույն փաստաթղթով «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարված գործարքների համար սահմանված սակագները, Ինեկոբանկի պաշտոնական կայքի «Առցանց վճարումներ» համակարգով կատարված գործարքների համար կիրառվում են սույն փաստաթղթով «Առցանց վճարումներ» համակարգի միջոցով կատարվող գործարքների համար սահմանված սակագները:

[19] ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգերի «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող գործարքների համար կիրառվում են սույն փաստաթղթով «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող գործարքների համար սահմանված սակագները:

[20] Բանկի կողմից տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոն չի տրամադրվում:

[21] Բանկի մասնաճյուղերում և Կենտրոնական գրասենյակում կատարվող փոխանցումների դեպքում, որոնք կատարվում են իրավաբանական անձի կամ ԱՁ-ի համար, գանձվում է միջնորդավճար 1%, նվազագույնը 1,000 ՀՀ դրամ:

[22] Guaranted OUR տարբերակն ընտրելու դեպքում լրացուցիչ գանձվում է 12,000 ՀՀ դրամ: Սակագինը ներառում է առանց նվազեցումների գումարը ստացողի հաշվին հասցնելու ծախսերը: JPY՝ ճապոնական իենով փոխանցումների դեպքում Guaranted OUR տարբերակը կիրառելի չէ. երրորդ բանկերի ծախսերը, առկայության դեպքում, գանձվում են հաճախորդից՝ լրացուցիչ: BEN տարբերակն ընտրելու դեպքում (փոխանցման ծախսերը շահառուի հաշվին) փոխանցումների համար կգործի 5000 ՀՀ դրամ սակագինը՝ նշված OUR սակագնի փոխարեն: Վերը նշված տարբերակները չեն տարածվում ռուբլով փոխանցումների վրա:

Վճարման հանձնարարականի կատարման վերաբերյալ հարցման ներկայացում, պայմանների փոփոխում կամ չեղյալացում[23]	1,500 ՀՀ դրամ՝ ՀՀ դրամի դեպքում 6,000 դրամ՝ ՌԴ ռուբլու դեպքում 30,000 ՀՀ դրամ՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի և այլ արտարժույթի դեպքում

Դրամարկղային գործառնություններ

	basic	plus	special
ԱՄՆ դոլարի, Եվրոյի, ՌԴ ռուբլու հնամաշ թղթադրամների և մինչև 1,996 թվականը թողարկված ԱՄՆ դոլարի թղթադրամների ընդունում (հաշվին մուտքագրում, այլ արժույթի փոխարկում կամ ցանկացած այլ գործարք, որի դեպքում գումարը մուտքագրվում է բանկի դրամարկղ կամ թղթադրամն անցնում է Բանկի տիրապետության տակ)	5%, եթե բանկը համարում է, որ թղթադրամը փոխանակման ենթակա է		
Հնամաշ ՀՀ դրամի թղթադրամների փոխանակում	Անվճար		
500 եվրո անվանական արժեքով թղթադրամների փոխանակում այլ թղթադրամներով կամ փոխարկում այլ արժույթի	1%		
Կանխիկով դրամարկղային գործառնության սակագին[24]	• դրամարկղերում 50,000 ՀՀ դրամ գումարը չգերազանցող վարկի մարման և հաշվի համալրման գործարքների համար՝ 500 ՀՀ դրամ* • դրամարկղերում 50,000 ՀՀ դրամ գումարը գերազանցող վարկի մարման և հաշվի համալրման գործարքների համար՝ սակագին չի գանձվում * **սակագինը չի կիրառվում հետևյալ դեպքերում՝** · արտարժութային վարկերի մարման և հաշիվների համալրման դեպքում, · միջբանկային և բյուջե փոխանցումների դեպքում, · վարկի ամբողջական մարման դեպքում,		

[23] Եթե գործարքը դեռևս չի կատարվել Բանկի կողմից, տվյալ սակագինը չի կիրառվում: Գանձված փոխանցման միջնորդավճարը չի վերադարձվում հաճախորդին: Եթե գործարքը կատարվել է Բանկի կողմից, ապա գանձված փոխանցման միջնորդավճարը չի վերադարձվում հաճախորդին:
[24] Բանկի մասնաճյուղերում և Կենտրոնական գրասենյակում կոմունալ վճարումներ չեն ընդունվում:

	· վճարային տերմինալների միջոցով առաջարկվող տարբերակներից տարբերվող այլ տրամաբանությամբ վճարում կատարելու դեպքում:

Հաշիվների քաղվածքների և տեղեկանքների տրամադրում

	basic	plus	special
Հաշվի ամսական քաղվածքի տրամադրում Բանկում	Անվճար		
Հաշվի քաղվածքի տրամադրում փոստով (ամսական)	• ՀՀ տարածքում՝ անվճար • ՀՀ տարածքից դուրս՝ 2,000 ՀՀ դրամ + փոստային առաքման ծախսերը[25]		
Հաշվի քաղվածքի տրամադրում էլ. փոստով	Անվճար		
Հաշվի քաղվածքի կրկնօրինակի տրամադրում[26]	• մինչև 1 տարվա վաղեմության- 1.000 ՀՀ դրամ • 1 տարուց ավել վաղեմության-3.000 ՀՀ դրամ	անվճար	
Տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում			
Մինչև 3 տարի վաղեմության	basic	plus	special
Բանկային հաշվի, ավանդի/պարտատոմսի վերաբերյալ[27] և SWIFT հաղորդագրության պատճենի տրամադրում	անվճար		

[25] Փոստային առաքումն իրականացվում է տեղական օպերատորի միջոցով, եթե հաճախորդի կողմից այլ հանձնարարական առկա չէ:
[26] Այս կետը չի վերաբերվում հիփոթեքային կրեդիտավորման շրջանակներում տրամադրվող քաղվածք/տեղեկանքներին, քանի որ «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն տարեկան 4 անգամ Բանկը պարտավորվում է հաճախորդներին քաղվածք/տեղեկանքները տրամադրել՝ անվճար:
[27] Հաշվի, ավանդի/պարտատոմսի առկայության, մնացորդի և շրջանառության տեղեկանքներ:

Գործարքների մանրամասների (այդ թվում արագ դրամական փոխանցումների համակարգերով) վերաբերյալ[28]	3,000 ՀՀ դրամ	անվճար
Վարկերի և դրանց ապահովությունների վերաբերյալ[29]	5,000 ՀՀ դրամ[30]	անվճար[29]
Եկամտային հարկի փոխհատուցում ստանալու նպատակով հիփոթեքային վարկի և հիփոթեքային վարկի ծրագրային համապատասխանության վերաբերյալ տեղեկանք	անվճար	
Եկամուտների հայտարարագրման վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	անվճար	
Այլ տիպի և/կամ վաղեմության տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում[31]	10,000 ՀՀ դրամ	անվճար

Ընդհանուր դրույթներ բանկային հաշվի «Ընթացիկ» սակագնային պլանի համար

1. «Բանկային հաշվի «Ընթացիկ» սակագնային պլան (ֆիզիկական անձանց համար)» սակագները և «Ինեկոբանկ» ՓԲԸ Տնօրինության կողմից հաստատված «Բանկային սպասարկման հիմնական պայմաններ»-ը (այսուհետ՝ Հիմնական պայմաններ) միասին հանդիսանում են «Բանկային ծառայությունների տրամադրման դիմում/պայմանագիր (ֆիզիկական անձ հաճախորդների համար)» փաստաթղթի անբաժանելի մասը: Սույն ամփոփագրում օգտագործվող հասկացություններն ունեն նույն իմաստը, ինչ Հիմնական Պայմաններում:
2. Մինչև 15/05/2021թ «Ընթացիկ սակագնային պլանին» միացած հաճախորդները սպասարկվելու են սույն փաստաթղթով սահմանված «Ընթացիկ սակագնային պլանի» «basic» փաթեթի սակագներով և պայմաններով (ներառյալ այն հաճախորդները, ովքեր ունեն ArCa Classic տեսակի քարտ՝ տրամադրված «Ընթացիկ սակագնային պլանի» շրջանակներում[32]), բացառությամբ «Ընթացիկ սակագնային պլանին» միացած այն հաճախորդների, որոնք տվյալ սակագնային պլանի շրջանակներում ունեն Visa Gold/Mastercard Gold քարտեր և այդ քարտերը չեն տրամադրվել

[28] 10 գործարքից ավել տեղեկատվության համար կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:
[29] 2 և ավելի պայմանագրերի գծով տեղեկատվություն ներառելու դեպքում, կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:
[30] Համաձայնությունների սակագները կարգավորվում են համաձայն վարկավորման սակագների:
[31] Ժամկետանց վարկերի վերաբերյալ տեղեկանքների տրամադրման համար սույն կետով սահմանված սակագները չեն կիրառվում . տվյալ ծառայության համար կարող է գանձվել միջնորդավճար՝ պարտավորության չափի 10%-ի չափով, սակայն ոչ պակաս, քան 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:
[32] Տվյալ հաճախորդների ArCa Classic քարտերը սպասարկվելու են «basic» փաթեթի շրջանակներում տրամադրվող Visa Classic/Mastercard Standard քարտերի սակագներով և պայմաններով:

Բանկի կողմից հայտարարված ակցիաների շրջանակներում: Դրանք սպասարկվելու են սույն սակագներով սահմանված «Ընթացիկ սակագնային պլանի» «plus» փաթեթի սակագներով:

3. Հաճախորդի դիմումի համաձայն սույն սակագնային պլանից այլ սակագնային պլանի, կամ նույն սակագնային պլանի մեկ փաթեթից մյուսին անցում կատարելու դեպքում սույն փաստաթղթով սահմանված ծառայությունների գծով կգործեն տվյալ/նոր սակագնային պլանի/փաթեթի սակագները: Հաշիվների սպասարկման վճարների համար գանձված գումարները ենթակա չեն վերադարձման/վերահաշվարկման,ընդ որում ընթացիկ սակագնային պլանի մեկ փաթեթից մյուսին անցում կատարելու դեպքում այդ ամսվա համար հաշվի սպասարկման վճարը կհաշարկվի այն փաթեթի սակագնի համաձայն, որին գանձման պահի դրությամբ միացած է հաճախորդը:

4. Հաշիվ բացելու ցանկություն ունեցող Հաճախորդը կարող է մոտենալ Բանկի ցանկացած Մանրածախ կամ Ունիվերսալ մասնաճյուղ՝ ներկայացնելով հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Աշխատակիցը հաճախորդին է ներկայացնում բանկային հաշվի ծառայության պայմանները և սակագները, ստուգում է ներկայացված փաստաթղթերի լիարժեքությունն ու վավերությունը և դրանց ամբողջականության դեպքում Հաճախորդի հետ կնքվում է բանկային ծառայությունների տրամադրման դիմում/պայմանագիրը և գանձվում է սակագներով սահմանված միջնորդավճարը:

5. Բանկային ընթացիկ հաշիվների բացման համար անհրաժեշտ է ներկայացնել՝

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ,
- Հանրային ծառայության համարանիշ կամ այն չստանալու վերաբերյալ տեղեկանք (Հայաստանի Հանրապետության քաղաքացու, Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի դեպքում),
- Անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր:

6. Ընթացիկ հաշիվները բացվում են անժամկետ: Հաշիվների բացման համար անհրաժեշտ մուտքագրվող նվազագույն գումար, ինչպես նաև հաշվի նվազագույն մնացորդ չի սահմանվում:

7. 3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող կանխիկի տրամադրումն իրականացվում է նախօրոք ներկայացված հայտի հիման վրա, որը Բանկին ներկայացվում է առնվազն մեկ օր առաջ՝ մինչև ժամը 14:45-ը: Առանց նախնական պատվերի երեք միլիոն ՀՀ դրամից ավելի գումարների տրամադրումը Բանկի կողմից կարող է մերժվել կամ բավարարվել՝ նշված գումարը գերազանցող գումարի նկատմամբ 0.5% չափով կանխիկ գումարի ելքագրման լրացուցիչ սակագին գանձելու իրավունքով:

8. Եթե Հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականում այլ ժամկետ նշված չէ, սույն ամփոփագրով նախատեսված ներբանկային փոխանցումները փաստացի կատարվում են վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրը, իսկ միջբանկային փոխանցումները փաստացի կատարվում են (փոխանցվող գումարը Բանկի կողմից ուղարկվում է միջնորդ կամ շահառուի բանկ)՝

- վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրը, եթե
  - Թղթային հանձնարարականը ներկայացվել է մինչև 13:00-ն,
  - Հեռակառավարման համակարգերով հանձնարարականը ներկայացվել է մինչև 14:00-ն:

- վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրվան հաջորդող գործառնական օրը (բացառություն են կազմում «Շտապ», հանձնարարականները, որոնք ընդունվում են մինչև տվյալ գործառնական օրվա ժամը 15:00-ն և կատարվում են նույն գործառնական օրը)[33], եթե
  - Թղթային հանձնարարականը ներկայացվել է 13:00-ից հետո,
  - Հեռակառավարման համակարգով հանձնարարականը ներկայացվել է 14:00-ից հետո:
- վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրվան հաջորդող գործառնական օրը՝ միջբանկային փոխանցումների հանձնարարականը շաբաթ օրը ներկայացնելու դեպքում:

9. ՌԴ ռուբլի արժույթով մուտքային փոխանցումները Եվրասիական Զարգացման բանկի միջոցով իրականացվելու դեպքում փոխանցված գումարը հաճախորդի բանկային հաշվին մուտքագրելիս գումարի նկատմամբ կկիրառվի 5%, նվազագույնը 3,000 ՀՀ դրամի չափով միջնորդավճար:
10. Ընթացիկ հաշվի ամսական սպասարկման վճարը սկսում է հաշվարկվել հաշիվը բացելու հաջորդ օրացուցային ամսվա սկզբից, իսկ գանձումը սկսում է իրականացվել վճարը հաշվարկելու հաջորդ օրացույցային ամսվա սկզբից, եթե այլ բան նախատեսված չէ Հաճախորդի և Բանկի միջև կնքված այլ պայմանագրերով:
11. Հաշիվների սպասարկման շրջանակներում նախատեսված վճարները 3 ամիս անընդմեջ չվճարելու դեպքում Բանկն իրավասու է սառեցնել հաճախորդի բոլոր հաշիվները: Հաշիվների ապասառեցումն իրականացվում է ավտոմատ կերպով, երբ հաշիվների համալրման արդյունքում ամբողջությամբ մարվում են սակագներով նախատեսված հաշիվների ամսական սպասարկման վճարների մասով կուտակված պարտավորությունը:
12. Բանկը կարող է միակողմանիորեն՝ առանց դատարան դիմելու փակել զրոյական մնացորդով և մեկ տարի անընդմեջ շարժ չունեցող հաշիվները:
13. Սահմանափակումների բացակայության դեպքում Բանկային հաշիվները փակվում են անվճար:
14. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա, ինչպես նաև Բանկի հետ կնքված գործարքների արդյունքում կիրառված սառեցումների հետևանքով: Ի լրումն Հիմնական պայմաններով նախատեսված դեպքերի՝ առանց Հաճախորդի կարգադրության Հաշվից դրամական միջոցների դուրսգրում կարող է իրականացվել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների, հարկային մարմինների և դրա իրավասություն ունեցող այլ պետական մարմինների կողմից ներկայացված հայտի/ակտերի հիման վրա:
15. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:

[33] ԿԲ թղթակցային հաշվով կատարվող փոխանցումները Բանկի հետ համաձայնեցմամբ:

16. Ընթացիկ սակագնային պլանի մասին ամբողջական տեղեկատվությանը կարելի է ծանոթանալ բանկի պաշտոնական կայքում՝ www.inecobank.am:

Ընդհանուր դրույթներ «Ընթացիկ» սակագնային պլանի շրջանակներում տրամադրվող Հաշվարկային քարտերի համար

1. Քարտը դրան կցված հաշվին (քարտային հաշիվ) առկա միջոցները տնօրինելու և դրանցով գործարքներ կատարելու հնարավորություն ընձեռող գործիք է: Քարտերի միջոցով հնարավոր է կանխիկ գումար ստանալ բանկոմատներում, վճարումներ կատարել տվյալ տեսակի քարտ սպասարկող վաճառքի կետերում (POS տերմինալների միջոցով), առցանց առևտուր կատարել, ինչպես նաև իրականացնել այլ գործառնություններ: Յուրաքանչյուր քարտի ընձեռած հնարավորությունները տարբերվում են՝ կախված քարտի տեսակից, համապատասխան ծառայության համար Բանկի սահմանած կանոններից և այլ գործոններից: Քարտի որոշ հնարավորություններ կարող են մատչելի չլինել առանձին գործառնություններ իրականացնելիս, ինչպես նաև այլ բանկերի բանկոմատներից և POS տերմինալներից օգտվելիս: Քարտն օգտագործելիս կարող են կիրառվել այլ բանկերի, վճարային համակարգերի և երրորդ անձանց կողմից սահմանված վճարներ, սակագներ և հատուկ պայմաններ, որոնք դուրս են Բանկի վերահսկողությունից և Բանկը դրանց համար պատասխանատվություն չի կրում:
2. Քարտը Բանկի սեփականությունն է և հաճախորդին տրամադրվում է օգտագործման քարտի վրա նշված ժամկետով: Բանկն իրավունք ունի պահանջել անհապաղ Բանկ վերադարձնել քարտը, դադարեցնել դրա օգտագործումը կամ փոխարինել այն:
3. Քարտը, ինչպես նաև PIN ծածկագիրը Հաճախորդին տրամադրվում են փակ ծրարով՝ առձեռն՝ Բանկի տարածքում, կամ նրան ուղարկվում են փոստով կամ այլ հեռահար եղանակով: PIN ծածկագիրը կարող է սահմանվել Հաճախորդի կողմից Քարտի ակտիվացման պահին, որի իրականացման համար օգտագործվում է գաղտնաբառ կամ մեկանգամյա օգտագործման հաստատման կոդ: Հաճախորդը պարտավորվում է Քարտը ստանալուն պես ստորագրել Քարտի վրա հատուկ առանձնացված վահանակի վրա՝ վավերացնելով այն:
4. Քարտի օգտագործմամբ գործարքներ կատարելիս քարտի համարի, քարտի դարձերեսին առկա CVV կոդի, PIN ծածկագրի, 3DSecure գործարքների հաստատման կոդի, ստորագրության և/կամ այլ նույնականացնող տվյալների կիրառմամբ Բանկն իրականացնում է Հաճախորդի անհրաժեշտ և բավարար նույնականացում, ինչը հիմք է քարտային հաշվին առկա միջոցներով համապատասխան գործարքն իրականացնելու համար:
5. Հաճախորդը պարտավոր է խստիվ պահպանել քարտի օգտագործման կանոնները, PIN ծածկագրի և այլ նույնականացնող տվյալների գաղտնիությունը և անհրաժեշտ շրջահայացություն ցուցաբերել այլ անձանց կողմից քարտի ապօրինի օգտագործման հնարավորությունը և տվյալների հասանելիությունը բացառելու համար: Բանկը պատասխանատվություն չի կրում դրանք երրորդ անձանց բացահայտվելու արդյունքում հաճախորդին պատճառված վնասների, ինչպես նաև քարտի սպասարկումն ապահովող այլ անձանց, ներառյալ վճարահաշվարկային կազմակերպությունների գործողություններով հաճախորդի կորուստների կամ վնասի համար:
6. Քարտով իրականացվող գործառնությունների ընթացքում ծագող ռիսկերը նվազեցնելու նպատակով, ելնելով քարտային հաշվի մնացորդի, քարտային հաշվով իրականացվող գործարքի չափերից, կատարման վայրից, գործարքի համար նախատեսված սահմանաչափից, Բանկն իրավունք ունի հաճախորդին տեղեկացնել քարտային հաշվով գործարքների կատարման և քարտային հաշվի շարժի վերաբերյալ՝

հեռախոսային կամ կապի այլ միջոցով հաղորդագրություն ուղարկելով, և ըստ այդմ գանձել սույն ամփոփագրով սահմանված համապատասխան վճարներ:

7. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայությունը ակտիվանում է քարտի պատվիրման պահին հաճախորդի համապատասխան հանձնարարականի հիման վրա: Հաճախորդը կարող է նաև ընտրել գումարի չափը, որը գերազանցող գործարքների վերաբերյալ ցանկանում է ստանալ SMS հաղորդագրություն: Վճարային քարտով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայության ակտիվացում/ապաակտիվացում, ինչպես նաև վերոնշյալ գործարքի գումարի չափի փոփոխություն կարող է իրականացվել քարտի գործողության ժամկետի ընթացքում հաճախորդի կողմից Բանկի տարածքում/ԻնեկոՕնլայն համակարգում ներկայացված համապատասխան դիմում-հայտի հիման վրա:

8. Հաճախորդը չի կարող Քարտային հաշիվն օգտագործել կամ թույլատրել օգտագործել որևէ անօրինական գործարք կամ դրանից բխող վճարում կատարելու նպատակով: Վճարումների կատարման վայրում (ներառյալ՝ համապատասխան ինտերնետային կայքերում) քարտի լոգոտիպի արտացոլումը չի նշանակում, որ կատարվող գործառնությունն օրինական է: Անօրինական գործարքի կատարման դեպքում Բանկն իրավունք ունի հաճախորդից պահանջել հատուցելու դրա հետևանքով իր կատարած ծախսերը և կրած վնասները:

9. Քարտի ապօրինի օգտագործման կամ նման վտանգի դեպքում հաճախորդի դիմումով կամ իր նախաձեռնությամբ նշված հիմքերի ի հայտ գալու պահին Բանկը ժամանակավորապես դադարեցնում է քարտի սպասարկումը (արգելափակում է քարտը): Հաճախորդը կրում է մինչև քարտը Բանկին վերադարձնելը քարտով իրականացված, հավաստագրում (Բանկի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից քարտով գործառնությունների կատարման թույլտվություն) չպահանջող գործարքների, քարտի ապաարգելափակման հետ կապված, ինչպես նաև վերջիններով պայմանավորված՝ Բանկի կատարած բոլոր ծախսերի և կրած բոլոր վնասների ռիսկերը: Բանկը կարող է նաև իր հայեցողությամբ դադարեցնել կամ կասեցնել քարտի սպասարկումը, պահանջել վերադարձնել կամ փոխարինել քարտը կամ հրաժարվել դրա վերաթողարկումից կամ լուծել քարտի տրամադրման և օգտագործման վերաբերյալ համապատասխան պայմանագիրը՝ քարտի օգտագործման օրինականության շուրջ կասկածների, ինչպես նաև քաճախորդի կողմից Բանկի հանդեպ ունեցած այլ պարտավորությունների պայմանների խախտման դեպքում:

10. Հաճախորդի դիմումով Բանկը կարող է տրամադրել տվյալ հաշվին կցված լրացուցիչ քարտեր այլ ֆիզիկական անձանց անունով: Լրացուցիչ քարտը կցվում է հաճախորդի քարտային հաշվին, և դրա համար առանձին հաշիվ չի բացվում, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ:

11. Հաճախորդը (հիմնական քարտապանը) կից քարտի քարտատիրոջ հետ համապարտ պատասխանատվություն է կրում կից քարտով կատարված գործառնությունների համար: Կից քարտի քարտատիրոջ նկատմամբ հավասարապես տարածվում են հաճախորդի (հիմնական քարտապանի) նկատմամբ կիրառելի հիմնական պայմանները, սակագները ու քարտի սպասարկումը կարգավորող այլ փաստաթղթերի դրույթները:

12. Եթե քարտի գործողության ժամկետը լրանալուց 1 (մեկ) ամիս առաջ հաճախորդը գրավոր ձևով չի հայտնում Բանկին քարտի տրամադրման և սպասարկման հետ կապված իրավահարաբերությունների, այդ թվում նաև՝ քարտի գործողությունը դադարեցնելու մտադրության մասին, ապա Բանկը կարող է քարտը յուրաքանչյուր անգամ վերաթողարկել նույն, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ տվյալ պահին Բանկի կողմից որոշված այլ պայմաններով: Քարտի վերաթողարկման դեպքում ժամկետանց քարտի փոխանակումը նոր քարտով կատարվում է քարտի գործողության ժամկետի վերջին բանկային օրը:

13. Բանկն իրավունք ունի դադարեցնել քարտի սպասարկումը, արգելափակել Քարտը և/կամ փակել քարտային հաշիվը, եթե քարտի թողարկումից հետո 3 (երեք) ամսվա ընթացքում հաճախորդը չի ներկայացել քարտը ստանալու և չի վճարել քարտի բացման և սպասարկման համար սահմանված վճարները, կամ եթե քարտի թողարկումից հետո մեկ տարվա ընթացքում հաճախորդը չի ներկայացել քարտը ստանալու, սակայն վճարել է քարտի բացման և սպասարկման հետ կապված սահմանված վճարները:
14. Քարտով կատարված գործարքներն իր կողմից կատարված չլինելու մասին հիմնավոր կասկածներ ունենալու դեպքում Հաճախորդը կարող է բողոքարկել քարտով կատարված գործարքները: Բողոքարկման հետ հապված հարաբերությունները կարգավորվում են համապատասխան վճարային համակարգի կողմից սահմանված կանոններով (ներառյալ՝ դրանցից բխող վեճերի լուծման վերաբերյալ պայմանները): Բանկը հաճախորդին տեղեկացնում է բողոքարկման ընթացքի և արդյունքների վերաբերյալ:
15. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերը տրամադրվում են 5 տարի ժամկետով:
16. Հաճախորդի դիմումի համաձայն սույն սակագնային պլանից այլ սակագնային պլանի անցում կատարելու դեպքում սույն սակագնային պլանի շրջանակներում տրամադրված քարտերի համար կգործեն նոր սակագնային պլանի շրջանակներում հասանելի նույնանուն և նույն արժույթով քարտերի սակագները, եթե հաճախորդը չի ցանկանում փակել քարտը կամ փոխել դրա տեսակը: Ընդ որում քարտերի սպասարկման վճարների համար գանձված գումարները ենթական չեն վերադարձման/ վերահաշվարկման:
17. Սույն սակագնային պլանին միացած հաճախորդները կարող են ձեռք բերել այլ քարտեր (հիմնական կամ կից)՝ start փաթեթի համապատասխան քարտի սակագներով նախատեսված պայմաններով:
18. Քարտային հաշվի նվազագույն մնացորդ չի սահմանվում:
19. Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը 0% է:
20. Քարտով անկանխիկ գործարքների իրականացումն անվճար է: Մեկ անկանխիկ գործարքի համար առավելագույն սահմանաչափ, ինչպես նաև անկանխիկ գործարքների օրական առավելագույն սահմանաչափ և քանակ չի սահմանվում:
21. Կանխիկացման կետերում կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը 10 գործարք է:
22. Կանխիկացման կետերում կանխիկացման գործարքների օրական առավելագույն սահամանաչափն է՝

	MasterCard Standard, Visa Classic քարտեր	MasterCard Gold, Visa Gold,Visa Platinum քարտեր
ՀՀ դրամ	1,250,000	2,000,000
ԱՄՆ դոլար, Եվրո	2,500	4,000
ՌԴ ռուբլի	200,000	300,000

23. Հաճախորդի դիմումի համաձայն կանխիկացման սահմանաչափի պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար բարձրացման դեպքում[34] սակագինը սահմանվում է 10,000 ՀՀ դրամ սակագին:
24. Ինեկոբանկի վճարային տերմինալների միջոցով քարտային հաշվի համալրումն անվճար է, իսկ այլ ընկերությունների վճարային տերմինալների միջոցով Ինեկոբանկի կողմից թողարկված քարտերի քարտային հաշվեհամարների համալրումը սահմանվում է հաշվի առնելով տվյալ տերմինալը սպասարկող ընկերության սակագները:
25. Քարտը տրամադրվում է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մարզերում գտնվող Բանկի մասնաճյուղերի համար նշված ժամկետին գումարվում է նաև քարտի տեղափոխման ժամանակը: Քարտի շտապ պատվիրման դեպքում լրացուցիչ գանձվում է 3,000 ՀՀ դրամ սակագին: Շտապ պատվիրման դեպքում քարտը տրամադրվում է 1 բանկային օրվա ընթացքում Երևան քաղաքում գտնվող Բանկի Մանրածախ կամ Ունիվերսալ մասնաճյուղում, իսկ մարզերում գտնվող մասնաճյուղերի համար նշված ժամկետին գումարվում է նաև քարտի տեղափոխման ժամանակը:
26. Քարտի բլոկավորման և ապաբլոկավորման համար սակագին չի գանձվում:
27. Քարտերի առաքման հնարավորությունը հասանելի է Երևան քաղաքում և ՀՀ մարզերում: Քարտերի առաքման հնարավորությունը գործում է Բանկի մասնաճյուղերում և ԻնեկոՕնլայն համակարգի/ԻնեկոՄոբայլ հավելվածի միջոցով նոր քարտ պատվիրելու դեպքում, ինչպես նաև Բանկի մասնաճյուղերում և ԻնեկոՕնլայն համակարգի/ԻնեկոՄոբայլ հավելվածի միջոցով հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականի հիման վրա քարտի վերաթողարկման դեպքում: Քարտը հաճախորդին առաքվում է Բանկում քարտի առաքման փաթեթը պատրաստ լինելուց հետո 1-3 աշխատանքային օրերի ընթացքում Երևանի տարածքում և 1-5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ մարզերում առաքումների դեպքում և հաճախորդին հանձնվում է անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

28. Նոր պին կոդի տրամադրման համար միջնորդավճար չի գանձվում:
29. Քաղվածքի ձևակերպման ամսաթիվ (Statement date) է համարվում յուրաքանչյուր ամսվա 1-ը:
30. Basic փաթեթի շրջանակներում տրամադրված հիմնական քարտի վաղաժամկետ փակման դեպքում կիրառվում են հետևյալ սակագները, եթե այլ բան սահմանված չէ տվյալ քարտի սակագները կարգավորող փաստաթղթերով՝
    - Քարտային հաշիվը բացելուց 365 օրվա ընթացքում 2,000 ՀՀ դրամ
    - Քարտային հաշիվը բացելուց 366 և ավելի օրվա ընթացքում՝ անվճար:
31. plus և special փաթեթների շրջանակներում տրամադրված հիմնական քարտի վաղաժամկետ փակման դեպքում կիրառվում են հետևյալ սակագները, եթե այլ բան սահմանված չէ տվյալ քարտի սակագները կարգավորող փաստաթղթերով՝

	plus	special

[34] Կանխիկացման սահմանաչափի բարձրացումը իրականացվում է Բանկի համաձայնությամբ:

Քարտային հաշիվը բացելուց 181 օրվա ընթացքում	10,000 ՀՀ դրամ, բացառությամբ այն քարտերի, որոնք պատվիրվել են «Ընթացիկ սակագնային պլանի» շրջանակներում 14/11/2020թ մինչև 14/05/2021թ ընթացքում, վերջիններիս համար գանձվում է 2,000 ՀՀ դրամ սակագին	20,000 ՀՀ դրամ
Քարտային հաշիվը բացելուց 182 և ավելի օրվա ընթացքում	անվճար	

Ընթացիկ սակագնային պլանի basic փաթեթից plus կամ special փաթեթին, կամ plus փաթեթից special փաթեթին անցում կատարելու դեպքում, basic/ plus փաթեթների շրջանակներում տրամադրված քարտի քարտային հաշվի փակման համար քարտային հաշվի վաղաժամկետ փակման սակագին չի գանձվում:

32. Եթե հաճախորդը կատարում է քարտատեսակի փոխարինում միևնույն փաթեթի շրջանակներում տրամադրվող այլ քարտատեսակով, ապա գանձվում է միայն 2,000 ՀՀ դրամ միանվագ վճար:
33. Օդանավակայանների բարձրակարգ սպասարկման սրահներում Priority Pass քարտի օգտագործման դեպքում յուրաքանչյուր այցելուի 1 այցի համար կգանձվի սակագին՝ 16,000 ՀՀ դրամի չափով[35]:

«Ինեկոբանկ» ՓԲԸ կայքի միջոցով «Առցանց վճարումներ»-ի իրականացման սակագներ

Ծառայություն	Սակագին[36]
Հաշվի համալրում	▪ 0.5%՝ ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված քարտերի դեպքում ▪ 2.5%՝ ArCa համակարգի միջոցով հավաստագրում չտրամադրող բանկերի կողմից թողարկված Visa և Master տեսակի քարտերի դեպքում
Քարտի համալրում	
Ավանդի համալրում	

[35] Տվյալ սակագինը սահմանված է միայն Priority Pass քարտեր ունեցող հաճախորդների համար:
[36] Անկախ սույն սակագներով սահմանված վճարներից քարտը թողարկող բանկի կողմից կարող են գանձվել վճարներ՝ համաձայն տվյալ քարտի պայմանների և սակագների:

Վարկի մարում	▪ Վարկային գծի դեպքում կիրառվում է սույն փաստաթղթով *Քարտի համալրման* համար սահմանված սակագինը Այլ վարկերի դեպքում ▪ 100 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար՝ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված քարտերի դեպքում ▪ 2.5%՝ ArCa համակարգի միջոցով հավաստագրում չտրամադրող բանկերի կողմից թողարկված Visa և Master տեսակի քարտերի դեպքում

Ընդհանուր դրույթներ «Առցանց վճարումներ» համակարգի միջոցով կատարված գործարքների համար

1. Ինեկոբանկի պաշտոնական կայքում «Առցանց վճարումներ» կարող են իրականացվել տեղական և միջազգային բանկերի կողմից թողարկված ArCa, Visa և Master վճարային քարտերով:
2. «Առցանց վճարումներ» համակարգի միջոցով հնարավոր է կատարել հետևյալ գործարքները՝
   - հաշվի համալրում - հնարավոր է կատարել փոխանցումներ Ինեկոբանկի՝ ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների ընթացիկ և խնայողական հաշիվներին,
   - քարտի համալրում - հնարավոր է կատարել փոխանցումներ Ինեկոբանկի՝ ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների քարտային հաշիվներին,
   - վարկի մարում - հնարավոր է կատարել Ինեկոբանկի կողմից ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներին տրամադրված վարկերի մարումներ վարկային պայմանագրի կոդը մուտքագրելու միջոցով,
   - ավանդի համալրում – հնարավոր է համալրել ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների կողմից Ինեկոբանկում ներդրված ավանդները պայմանագրի համարը մուտքագրելու միջոցով:
3. Մեկ գործարքի առավելագույն գումարը սահմանվում է 500,000 ՀՀ դրամ:
4. Արտարժութային վճարային քարտով փոխանցում/վճարում կատարելու դեպքում գործարքը տեղի է ունենում ՀՀ դրամով, իսկ փոխարկումը՝ համաձայն քարտը թողարկող բանկի կողմից սահմանված փոխարժեքի:
5. Արտարժութային գործարքի դեպքում մուտքագրված գումարը փոխարկվում է համապատասխան արժույթի՝ համաձայն Ինեկոբանկի կողմից սահմանված փոխարժեքի:
6. Հաճախորդի կողմից գործարքի իրականացման համար անհրաժեշտ գործողությունները պատշաճ կատարելուց հետո Բանկը գործարքի գումարը հասանելի է դարձնում ստացողի քարտին կամ վերջինիս բանկային հաշվին կամ գործարքի գումարի չափով համալրում/մարում է նշված պայմանագրի համարով/վարկային կոդով ավանդը/վարկը առավելագույնը 10 րոպեների ընթացքում:

7. Տեխնիկական խնդիրների/խափանումների դեպքում Բանկը գործարքի գումարը հասանելի է դարձնում ստացողի քարտին կամ վերջինիս բանկային հաշվին կամ գործարքի գումարի չափով համալրում/մարում է նշված պայմանագրի համարով/վարկային կոդով ավանդը/վարկը առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:
8. Հաճախորդի կողմից գործարքի իրականացման համար անհրաժեշտ գործողությունները պատշաճ կատարելուց հետո Բանկը հաճախորդին տրամադրում է գործարքը հավաստող էլեկտրոնային անդորրագիր:
9. Հաճախորդի կողմից գործարքի իրականացման համար անհրաժեշտ գործողությունները պատշաճ կատարելուց հետո Բանկի կողմից գործարքի գումարը ստացողի քարտին կամ վերջինիս բանկային հաշվին հասանելի դարձնելու պահից կամ գործարքի գումարի չափով նշված պայմանագրի համարով/վարկային կոդով ավանդի/վարկի համալրման/մարման պահից Բանկի պարտավորությունները համարվում են կատարված:
10. Սույն առցանց վճարումների կատարման համակարգը չի հանդիսանում առևտրի և սպասարկման կետին վճարում կատարելու գործիք և չի երաշխավորում ենթադրյալ բարիքի ստացումը: Բանկը պատասխանատվություն չի կրում գործարքի կատարմամբ դրա մասնակիցներին կամ այլ անձանց պատճառված վնասների համար:
11. Կատարված գործարքները ենթակա չեն չեղարկման առանց գումարը ստացող անձի համաձայնության:

Ինեկո Օնլայն/Մոբայլ համակարգում «Փոխանցում քարտին» ծառայության սակագներ

Ծառայություն	**Սակագին**
Փոխանցում Ինեկոբանկի ընթացիկ դրամային հաշիվներից	
Ինեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտին	0%
ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտին	0.5%
Փոխանցում Ինեկոբանկի կողմից թողարկված դրամային վճարային քարտերից[37]	

[37] Անկախ սույն փաստաթղթով սահմանված սակագներից լրացուցիչ գանձվում է տվյալ վճարային քարտի պայմաններով և սակագներով սահմանված քարտից քարտ/քարտային հաշվից նույն հաճախորդի այլ բանկային հաշիվներին փոխանցումների համար սահմանված սակագինը:

Ինեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտին	0%
ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտին	0.5%
Փոխանցում ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգում կցված այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերից[38]	
Ինեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտին	0.5%
ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտին	1%

Ընդհանուր դրույթներ ԻնեկոՕնլայն/մոբայլ համակարգում «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարված գործարքների համար

1. Փոխանցում քարտին ծառայությունը հնարավորություն է տալիս Ինեկոբանկի ընթացիկ դրամային հաշիվներից, Ինեկոբանկի կողմից թողարկված դրամային վճարային քարտերից, ինչպես նաև ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգում կցված[39] ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերից փոխանցումներ կատարել ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված ցանկացած վճարային քարտի: Տվյալ ծառայության միջոցով փոխանցումները իրականացվում են ՀՀ դրամով:
2. Փոխանցող և/կամ ստացող քարտի արժույթը ՀՀ դրամից տարբեր լինելու դեպքում փոխարկումը կատարվում է համաձայն համապատասխանաբար փոխանցող և/կամ ստացող քարտը թողարկող բանկի կողմից սահմանված փոխարժեքի:
3. Տվյալ ծառայության միջոցով կատարված փոխանցումների դեպքում փոխանցվող գումարը քարտին հասանելի է դառնում հաշված րոպեների ընթացքում:
4. Սույն փաստաթղթով սահմանված միջնորդավճարը գումարվում է գործարքի գումարին և գանձվում անմիջապես գործարքի ժամանակ:
5. Մեկ գործարքի առավելագույն գումար է սահմանվում 500,000 ՀՀ դրամը:

[38] Անկախ սույն փաստաթղթով սահմանված սակագներից թողարկող բանկի կողմից կարող են սահմանվել այլ վճարներ՝ համաձայն տվյալ քարտի սպասարկման պայմանների և սակագների:

[39] ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգում այլ բանկի վճարային քարտի կցման և սպասարկման պայմաններն ու սակագները կարգավորվում են «ԻնեկոՕնլայն/մոբայլ համակարգում այլ բանկի վճարային քարտի կցման պայմաններ և սակագներ» փաստաթղթով:

plus փաթեթ

Արտերկիր մեկնողների աջակցության ապահովագրություն

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ	ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ
Ամբողջ աշխարհ*	30,000 եվրո	15 օր տարվա մեջ	50 եվրո

Ի՞ՆՉՆ Է ՀԱՏՈՒՑՎՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ

Հանկարծակի հիվանդության կամ դժբախտ պատահարի արդյունքում առաջացած հետևյալ ծախսերը.

- ✓ Շտապ և անհետաձգելի բուժօգնություն
- ✓ Ամբուլատոր բուժում
- ✓ Ախտորոշիչ հետազոտություններ
- ✓ Բժշկի կողմից նշանակված դեղամիջոցներ
- ✓ Վիրակապային և ֆիքսման այլ միջոցներ (գիպս, բանդաժ)
- ✓ Ստացիոնար բուժում
- ✓ Ախտորոշիչ հետազոտություններ
- ✓ Անհետաձգելի վիրահատություններ
- ✓ Կացություն ստանդարտ հիվանդասենյակում
- ✓ Անհետաձգելի ատամնաբուժական օգնություն
- ✓ Տրանսպորտային ծախսեր
- ✓ Դեպի հիվանդանոց
- ✓ Բժշկական հայրենադարձություն
- ✓ Անչափահաս երեխաների հայրենադարձություն
- ✓ Ընտանիքի անդամի, բժշկի կամ այլ անձի հրատապ ժամա-նում
- ✓ Հետմահու հայրենադարձություն
- ✓ Հեռախոսային զանգեր աջակցող ընկերություն
- ✓ COVID-19 հիվանդության կապակցությամբ հիվանդանոցային (ստացիոնար) պայմաններում բուժում ստանալը**

Բժշկական օգնության անհրաժեշտության դեպքում Ապահովագրված անձը պետք է զանգահարի Մոնդիալ Ասիստանս (շուրջօրյա բազմալեզու բժշկական աջակցության ծառայություն) հետևյալ հեռախոսահամարով՝ +7 (495) 212-21- 43:

*ԱՄՆ-ի և Կանադայի տարածքում մինչև 70 (ներառյալ) տարեկան մեկ Ապահովագրված անձի գծով ապահովագրական հատուցման առավելագույն սահմանաչափը օրական ծախսի գծով և/կամ յուրաքանչյուր բժշկական ծառայության համար կազմում է 2,000 (երկու հազար) եվրո, իսկ 71-ից 85 (ներառյալ) տարեկան մեկ Ապահովագրված անձի գծով՝ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար ապահովագրական հատուցման առավելագույն սահմանաչափը կազմում է 1,000 (մեկ հազար) եվրո:

** Միայն ուղևորության երկրի պետական սահմանը հատելու օրվան հաջորդող օրվանից սկսած կատարված թեստավորման դրական արդյունքի դեպքում:

special փաթեթ

Ճանապարհորդության ընթացքում բժշկական և ճանապարհորդական անվճար խորհրդատվություն:
Visa International Medical and Travel Assistance ծառայության շրջանակում հաճախորդները ճանապարհորդության ընթացքում հնարավորություն ունեն ստանալ բժշկական խորհրդատվություն հեռախոսազանգի միջոցով, կապ հաստատել տեղական առողջապահական ծառայություններ մատուցող տեղական ընկերության կամ այլ համապատասխան անձի հետ՝ հաճախորդի առողջական վիճակը վերահսկելու համար ինչպես հոսպիտալացման ընթացքում, այնպես էլ հետո:
Ստորև ներկայացված են միջազգային SOS հեռախոսահամարները, որոնք անհրաժեշտ է պահպանել ճանապարհորդության ընթացքում կամ անհրաժեշտության դեպքում մինչև ճանապարհորդելը խորհրդատվություն ստանալու համար՝

- LONDON: +44 (0) 208 762 8373
- MOSCOW: +7 (495) 937 6453
- DUBAI: +971 (4) 253 6024
- USA (TOLL FREE): + 1 (877) 859 1273
- UKRAINE: + 380 (44) 499 39 75
- SOUTH AFRICA: + 27 11 541 1068

Ծառայության այլ մանրամասներին կարող եք ծանոթանալ այցելելով Visa CEMEA. Home Page (cardholderbenefitsonline.com) հղմամբ:

- **Տարեկան 2 անվճար մուտքի հնարավորություն օդանավակայանների Lounge key գոտիներ**
- **Թռիչքի և ուղեբեռի ուշացման ապահովագրություն**

Visa Platinum քարտապաններն ապահովագրված են ճանապարհորդական անհարմարություններից ինչպիսիք են ճանապարհորդության ընթացքում ուղեբեռի ուշացումը, թռիչքի ուշացումը կամ թռիչքի բաց թողնումը:

Ապահովագրական ծածկույթների և հատուցման սահմանաչափերի աղյուսակ.

	Ճանապարհորդություն բնակության/ռեզիդենտության երկրում[40]	Ճանապարհորդություն բնակության/ռեզիդենտության երկրից դուրս

[40] Բնակության/ռեզիդենտության երկրում յուրաքանչյուր ճանապարհորդություն ներառում է առնվազն 2 գիշեր առաջ նախօրոք ամրագրված համար հյուրանոցում, մոթելում, արձակուրդային ճամբարում, մահճակալ և նախաճաշ, արձակուրդային քոթեջ կամ նմանատիպ կացարանի վարձույթ վարձավճարի դիմաց, որը մշտական բնակության վայրից ավելի քան 100 կիլոմետր հեռավորության վրա է:

Ներկայացված սահմանաչափերը մեկ անձի մեկ պատարահի գծով են, եթե այլ բան նշված չէ: All benefit amounts are per person per trip unless otherwise noted		
Թռիչքի ուշացում Travel Delay		
Թռիչքի ուշացում (4 ժամից ավել ուշացման դեպքում) Delayed Departure, after 4 hours delay	200 ԱՄՆ դոլար	200 ԱՄՆ դոլար
Ուղեբեռի ուշացում Baggage Delay		
Ուղեբեռի ուշացում (4 ժամից ավել ուշացման դեպքում) Delayed Departure, after 4 hours delay	200 ԱՄՆ դոլար	200 ԱՄՆ դոլար
Բաց թողնված թռիչք Missed Departure		
Տարեկան սահմանաչափ	-	500 ԱՄՆ դոլար
Չհատուցվող գումար մեկ պատահարի մեկ անձի գծով Per event per person excess	-	50 ԱՄՆ դոլար
Missed Connection		
Missed Connection	-	300 ԱՄՆ դոլար

Ապահովագրության մանրամասներին կարող եք ծանոթանալ այցելելով Visa CEMEA. Home Page (cardholderbenefitsonline.com) հղմամբ:

Գնումների ապահովագրություն

Քարտապանները հնարավորություն ունեն ապահովագրել քարտով գնված ապրանքը գողությունից և վնասումից՝ գնումը կատարելու օրվանից 90 օրերի ընթացքում:
Ապահովագրական ծածկույթների և հատուցման սահմանաչափերի աղյուսակ.

Գնումների ապահովագրություն Buyers Protection	
Առավելագույն սահմանաչափ 365 օրվա համար Limit per 365 day period	20,000 ԱՄՆ դոլար
Առավելագույն սահմանաչափ մեկ պատահարի գծով Limit per incident	5,000 ԱՄՆ դոլար
Առավելագույն սահմանաչափ առցանց գնված ապրանքների համար որոնք առաքվել են վնասված կամ չեն առաքվել Limit for online purchases delivered damaged or not delivered	1,500 ԱՄՆ դոլար
Մեկ ապրանքի գծով նվազագույն սահմանաչափ Single article minimum limit	100 ԱՄՆ դոլար
Մեկ ապրանքի գծով առավելագույն սահմանաչափ Single article maximum limit	1,500 ԱՄՆ դոլար
Չհատուցվող գումար մեկ առարկայի գծով Per item Excess	50 ԱՄՆ դոլար

Ապահովագրությունը գործում է, եթե ապահովագրական դեպքի ծագման ժամանակ հաճախորդը հանդիսանում է քարտապան և գնման ընդհանուր ծախսի 100%-ը վճարված է VISA Platinum քարտով:
Ապահովագրության մանրամասներին կարող եք ծանոթանալ այցելելով Visa CEMEA. Home Page (cardholderbenefitsonline.com) հղմամբ:

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

Ուշադրություն՝

1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է Հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):
2. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Հաճախորդի՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Ձեր ֆինանսական տեղեկատուն

«ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ»՝ www.fininfo.am, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

Բանկային հաշիվների սպասարկման հիմնական պայմաններ

1. Ստորև ներկայացված դրույթները կարգավորում են Բանկի և Հաճախորդի միջև բանկային, ներառյալ՝ ընթացիկ, քարտային, ավանդային և այլ հաշվիվների բացման և սպասարկման կապակցությամբ ծագող պայմանագրային հարաբերությունները: Հաշիվների առանձին տեսակների առանձնահատկությունները և հաշիվներով իրականացվող գործառնությունների տեսակները կարգավորվում են Հիմնական պայմաններով, սակագներով, ուղեցույցներով, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով:

2. Բանկի կողմից առաջարկվում են տարբեր հնարավորություններ ընձեռող հաշիվներ: Ընթացիկ հաշիվները հնարավորություն են ընձեռում իրականացնել կանխիկի մուտքագրում և ելքագրում, դրամական միջոցների վճարումներ և փոխանցումներ, ինչպես նաև Բանկի կողմից սահմանված այլ գործառնություններ:
3. Խնայողական հաշիվներով իրականացվող գործառնությունների տեսակները սահմանվում են համապատասխան սակագներով: Խնայողական հաշիվներին առկա միջոցները համարվում են ցպահանջ ավանդներ:
4. Յուրաքանչյուր հաշիվ սպասարկում է միայն մեկ արժույթ:
5. Միևնույն արժույթով մեկից ավելի հաշիվների առկայության դեպքում Հաճախորդը կարող է տեղեկացնել Բանկին այն հաշվի մասին, որն օգտագործվելու է համապատասխան գործառնության (օրինակ՝ ավանդի տոկոսների վճարման) համար, եթե դա հնարավոր է տվյալ գործառնության կանոններով: Բանկը կարող է իր հայեցողությամբ ընտրել Հաճախորդի համապատասխան հաշիվը և այն օգտագործել համապատասխան գործառնության համար:
6. Մուտքագրված թղթադրամների և մետաղադրամների կեղծված լինելու հետ կապված կասկածների դեպքում Բանկը կարող է առգրավել դրանք՝ հանձնելով իրավապահ մարմիններին կամ մասնագիտացված անձանց՝ հետագա ուսումնասիրության համար: Այդ դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում հաշվին մուտքագրված գումարի պակասորդի համար:
7. Իր հաշվից այլ անձանց հաշիվներին գումարներ փոխանցելու համար Հաճախորդը կարող է վճարման հանձնարարականներ ներկայացնել Բանկի մասնաճյուղերում, ԻնեկոՕնլայն համակարգի միջոցով, ինչպես նաև քարտային հաշվին կցված վճարային համակարգերի միջոցով, եթե վերջիններս թույլ են տալիս իրականացնել միջոցների փոխանցումներ: Հաճախորդի վճարման հանձնարարականները կատարվում են Հաճախորդի համապատասխան Հաշվին տվյալ հանձնարարականը կատարելու համար (այդ թվում՝ հանձնարարականից բխող Սակագներով նախատեսված համապատասխան վճարները կատարելու) բավարար միջոցների առկայության դեպքում: Հաշվին միջոցների բավարար լինելու փաստը որոշվում է Բանկի կողմից: Վճարման հանձնարարականների մասնակի կատարում չի իրականացվում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
8. Հաճախորդի հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, որոնց գումարը բավարար է հաշվին ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար, այդ միջոցները դուրս են գրվում Հաճախորդի կարգադրությունները և դուրսգրման այլ փաստաթղթերը մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականություն), եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Բանկը պարտավոր է հաճախորդի կարգադրությամբ հաշվից դրամական միջոցներ դուրս գրել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, եթե այլ ժամկետներ նախատեսված չեն օրենքով, դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով կամ սակագներով: Հաճախորդը կարող է ներկայացնել հաշվից ավելի ուշ ամսաթվի միջոցներ փոխանցելու հանձնարարականներ, ինչպես նաև հանձնարարել Բանկին հետագայում պարբերաբար միջոցներ գանձել և փոխանցել վճարման հանձնարարականում նշված հասցեատիրոջը: Այդ դեպքում Բանկը Հաճախորդի հանձնարարականում նշված հասցեատիրոջ օգտին գումարներ է փոխանցում վճարման հանձնարարականում նշված ժամկետում կամ ամսաթվերին՝ հաշվին բավարար միջոցների առկայության դեպքում:
9. Հաշվից միջոցների դուրսգրումը կարող է իրականացվել երրորդ անձանց հանձնարարականներով՝ համապատասխան վճարային համակարգի կանոնների համապատասխան կամ Բանկի սահմանած ձևով: Բանկն իրավունք ունի մերժել երրորդ անձանց պահանջով միջոցների դուրսգրման գործարքները, եթե դրանք չեն համապատասխանում Բանկի սահմանած պահանջներին:

10. Հաշվից գումարներ ելքագրելիս հաշվին միջոցների անբավարար լինելու դեպքերում Բանկը, Հաճախորդի հետ առանձին կնքված պայմանագրի համաձայն, կարող է վարկավորել հաշիվը (տրամադրել օվերդրաֆտ) և միջոցները դուրսգրել Հաճախորդին տրամադրված վարկային միջոցների հաշվին: Հաշվի վարկավորման արդյունքում Հաճախորդին տրամադրված միջոցների օգտագործման, դրանց նկատմամբ հաշվարկվող տոկոսների հաշվարկման կարգն ու չափը սահմանվում են Բանկի և Հաճախորդի միջև առանձին կնքվող պայմանագրով:
11. Հաճախորդի հաշվին կատարված վճարումներն ու այլ մուտքերը կրեդիտագրվում (մուտքագրվում) են հաշվին, ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտքագրելուն հաջորդող բանկային օրը, եթե այլ բան նախատեսված չէ կիրառելի իրավական ակտերով:
12. Հաճախորդի հաշվում դրամական միջոցների անբավարարության դեպքում դրամական միջոցները դուրս են գրվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաջորդականությամբ: Եթե Հաճախորդի հաշվին արգելանք դրված չէ, առաջնահերթության իրավունքով Բանկը գանձում է իր նկատմամբ Հաճախորդի չմարված ժամկետանց պարտավորությունների գումարները: Ընդ որում, Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ սահմանել Բանկի նկատմամբ Հաճախորդի ունեցած պարտավորությունների գումարների գանձման հերթականությունը:
13. Բանկը Հաճախորդի բոլոր հաշիվների մնացորդների, դրամական մուտքերի և հաշվեգրվելիք տոկոսագումարների նկատմամբ ունի գրավի իրավունք՝ ի ապահովումն Հաճախորդի՝ Բանկի հետ կնքված բոլոր գործարքներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով Բանկի նկատմամբ առաջացած պարտավորությունների կատարման: Հաճախորդն իրավունք չունի առանց Բանկի գրավոր համաձայնության գրավ դնել կամ այլ կերպ ծանրաբեռնել հաշվում առկա և/կամ ստացվելիք դրամական միջոցները:
14. Բանկը ամսական պարբերականությամբ ֆիզիկական անձ Հաճախորդին տրամադրում է հաշվի վերաբերյալ քաղվածք: Բանկը ֆիզիկական անձ հանդիսացող Հաճախորդին կարող է քաղվածք չտրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հաշիվը չի դեբետագրվել կամ կրեդիտագրվել: Քաղվածքները տրամադրվում են Հաճախորդի հետ համաձայնեցված եղանակով, այդ թվում ԻնեկոՕնլայն Համակարգի միջոցով: Բանկը քաղվածքն ուղարկում է նաև էլեկտրոնային փոստով, եթե Հաճախորդը Բանկին տրամադրել է իր էլեկտրոնային փոստի հասցեն: Բանկը կարող է խմբավորել Հաշիվների շարժերը Հաճախորդին ներկայացվող մեկ քաղվածքում:
15. Հաճախորդի պահանջով Բանկը պարտավոր է ինգօրյա ժամկետում Հաճախորդին տրամադրել իր հաշվի վերաբերյալ Հաշվի քաղվածք՝ գանձելով հաշվի քաղվածքի տրամադրման համար Սակագներով սահմանված վճարները:
16. Քաղվածքում արտացոլված տվյալները համարվում են հաշվով կատարված գործարքների մասին պատշաճ ծանուցում: Քաղվածքում ներկայացված տվյալները համարվում են ընդունված և հաստատված Հաճախորդի կողմից, եթե Հաճախորդը քաղվածքի վերաբերյալ դիտողությունները գրավոր ձևով չի ներկայացրել Բանկին՝ քաղվածքը ստանալու պահից 30 (երեսուն) բանկային օրվա ընթացքում: Բանկը պատասխանատու չէ քաղվածքների առաքման հետ կապված փոստային ծառայությունների կամ կապի միջոցների սխալի, թերացման, քաղվածքների կորստյան կամ հափշտակության հետևանքով առաջացած վնասի, ներկայացված պահանջների կամ տեղեկատվության հրապարակման համար:
17. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն՝ առանց դատարան դիմելու դադարեցնել հաշվի սպասարկումը կամ փակել այն, եթե կասկածներ կան հաշիվներով իրականացվող գործառնությունների օրինականության վերաբերյալ կամ Հաճախորդը, Բանկի կողմից սահմանված ժամկետում չի տրամադրել Բանկի կողմից պահանջված տեղեկությունները, ինչպես նաև Հաճախորդի կողմից ստանձնած այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում:

18. Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն հրաժարվել հաշվից և դիմել Բանկին հաշիվը փակելու համար՝ այդ մասին Բանկին ոչ ուշ քան 7 (յոթ) բանկային օր առաջ Բանկի կողմից սահմանված եղանակով ծանուցելով և ամբողջությամբ մարելով Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորությունները: Բանկը կարող է հրաժարվել հաշիվը փակելուց, եթե հաշվի վրա դրված են արգելանքներ կամ այլ սահմանափակումներ, կամ հաշիվն անհրաժեշտ է Հաճախորդի կողմից օգտագործվող այլ ծառայություններից օգտվելու համար, կամ Հաճախորդն ունի չկատարված պարտավորություններ Բանկի հանդեպ: Հաշիվը փակելուց առաջ հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը վճարվում է Հաճախորդին, կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշվի՝ Հաճախորդի համապատասխան գրավոր դիմումը ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում:
19. Հաշվի փակման պահից դադարեցվում են այդ հաշիվը սպասարկող Քարտերի սպասարկումն ու Համակարգերից օգտվելու Հաճախորդի լիազորությունները: Եթե այլ բան սահմանված չէ Բանկի կողմից, հաշիվը փակելիս փակվում են նաև դրան կցված այլ հաշիվները:

Հաշվի սպասարկումից բխող վեճերի լուծման կարգ

1. Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. Հաճախորդը բողոքը (բացառությամբ՝ բողոք-պահանջի) և դիմումը կարող է Բանկին ներկայացնել առձեռն (հանձնելով գրությունը Բանկի գործունեության վայրում), փոստով (ուղարկելով Բանկի գլխամասային գրասենյակի փոստային հասցեով), Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված բողոքարկման հայտի միջոցով, հեռախոսով (զանգահարելով Բանկի Կոնտակտային կենտրոն) կամ Բանկի այլ հեռահար հաղորդակցման ուղիներով (էլեկտրոնային փոստով, Ինեկո Օնլայն համակարգով, սոցիալական ցանցերի միջոցով և այլն):Բողոք-պահանջը Բանկին ներկայացվում է գրավոր՝ առձեռն, փոստով կամ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված բողոքարկման հայտով:
3. Բանկը բողոքի վերաբերյալ որոշում է կայացնում (բավարարել, մասնակի բավարարել, մերժել) 10 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Հաճախորդն իրավունք ունի Բանկի և իր միջև բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Բանկային ծառայությունների մատուցումը հեռակառավարման համակարգերի միջոցով

1. Բանկն առաջարկում է ԻնեկոՕնլայն, ԻնեկոՄոբայլ և այլ համակարգեր (այսուհետ՝ Համակարգեր)՝ ինտերնետով, հեռախոսազանգի կամ SMS հաղորդագրության և կապի այլ միջոցներով բանկային ծառայություններից օգտվելու, ինչպես նաև տեղեկություններ ստանալու հնարավորություն՝ առանց Բանկ այցելելու: Համակարգերը ժամանակակից և հարմարավետ գործիքներ են, որոնք հնարավորություն են ընձեռում դիտել հաշիվներով կատարվող գործառնությունները, ներկայացնել վճարման հանձնարարականներ, ստանալ տեղեկություններ, կատարել արտարժույթի փոխանակում, վճարումներ, ներկայացնել և ստանալ (ակցեպտավորել) դիմումներ, հայտեր, առաջարկներ (օֆերտաներ), կնքել պայմանագրեր և այլ գործարքներ, ինչպես նաև իրականացնել տվյալ համակարգում Բանկի կողմից մատչելի դարձված ֆինանսական և այլ գործառնություններ: Համակարգերի տեսակները, դրանց օգտագործման պայմանները և կանոնները հրապարակվում են Բանկի պաշտոնական կայքում կամ համապատասխան Համակարգից օգտվելու համար սահմանված այլ կայքերում, ծրագրային ապահովման միջոցներում և բջջային հավելվածներում և կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:

2. Համակարգերը հասանելի են Բանկում համապատասխան հաշիվներ ունեցող Հաճախորդների համար: Հաճախորդին համապատասխան Համակարգից օգտվելու սարքի, օգտագործողի անվան, գաղտնաբառի, ինչպես նաև Հաճախորդին համակարգից օգտվելու հնարավորություն այլ կերպ ընձեռելը նշանակում է, որ Հաճախորդի և Բանկի միջև կնքվել է Համակարգի տրամադրման պայմանագիր՝ Հիմնական պայմաններին համապատասխան: Համակարգի տրամադրման պայմանագրի անբաժանելի մասն են Հիմնական պայմանները, սակագները, համապատասխան Համակարգի օգտագործման ուղեցույցները, Բանկի ինտերնետային կայքերի, բջջային հավելվածների և այլ ծրագրային ապահովման օգտագործման կանոնները և պայմանները, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը:
3. Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ օգտագործողի անվանման, գաղտնաբառերի, կամ այլ հաղորդագրությունների մուտքագրմամբ Բանկն իրականացնում է Հաճախորդի անհրաժեշտ և բավարար նույնականացում, ինչը հիմք է Համակարգերի միջոցով Հաճախորդին բանկային ծառայություններ մատուցելու համար:
4. Հաճախորդին նույնականացնելուց հետո Համակարգ մուտք գործելու համար Հաճախորդի կողմից օգտագործվող գաղտնաբառն ունի թղթային կրիչի վրա դրված բնօրինակ ստորագրությանը համարժեք իրավաբանական ուժ: Հաճախորդի կողմից Համակարգ մուտք գործելուց հետո Համակարգի միջոցով Բանկ ներկայացվող բոլոր հայտերը, դիմումները, պայմանագրերն ու այլ էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են ստորագրված Հաճախորդի կողմից: ԻնեկոՕնլայն Համակարգի միջոցով տեղեկատվություն փոխանակելը հավասարազոր է Բանկի տարածքում առձեռն փոխանակելուն:
5. Համակարգերի միջոցով Հաճախորդների սպասարկումը իրականացվում է միայն Հաճախորդի (Հաճախորդի ներկայացուցչի) մոտ համապատասխան Համակարգից օգտվելու համար անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական ապահովվածության առկայության դեպքում: Ընդ որում Բանկը Հաճախորդին հեռակառավարման համակարգերի միջոցով ծառայություններ մատուցում է բացառապես Բանկի համար ընդունելի ծրագրային և տեխնիկական ապահովվածության միջոցների կիրառմամբ: Համակարգերից օգտվելիս կարող են կիրառվել ինտերնետային, էլեկտրոնային և այլ հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող օպերատորների և այլ անձանց օգտին գանձվող վճարներ, որոնց համար Բանկը պատասխանատվություն չի կրում:
6. Հաճախորդը պարտավոր է խստիվ պահպանել Համակարգ մուտք գործելու գաղտնաբառի և այլ նույնականացնող տվյալների գաղտնիությունը և անհրաժեշտ շրջահայացություն ցուցաբերել Համակարգերն օգտագործելիս այլ անձանց կողմից Համակարգ ապօրինի մուտքի հնարավորությունը և տվյալների հասանելիությունը բացառելու համար: Բանկը պատասխանատվություն չի կրում դրանք երրորդ անձանց բացահայտվելու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար:
7. ԻնեկոՕնլայն և այլ Համակարգերից օգտվելու համար Բանկը կարող է տրամադրել ծրագրային ապահովում, անվտանգության բանալիներ, չիպեր, թոքեններ և Համակարգ մուտք գործելու անվտանգությունն ապահովող այլ սարքեր: Այդ սարքերը համարվում են Բանկի սեփականությունը և ենթակա են օգտագործման Բանկի սահմանած կարգով: Սարքի կորստի կամ փչացման դեպքում Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին: Բանկը կարող է պահանջել անհապաղ հետ վերադարձնել Հաճախորդին տրամադրված սարքերը, փոխարինել դրանք, ինչպես նաև սահմանել դրանց օգտագործման հատուկ կարգ և պայմաններ:
8. Համակարգերը ենթակա են օգտագործման դրանց նպատակային նշանակությանը խիստ համապատասխան: Հաճախորդը պարտավոր է պահպանել Համակարգերի ծրագրային ապահովման օգտագործման հետ կապված մտավոր սեփականության բոլոր իրավունքները և թույլ չտալ Համակարգի ծրագրային ապահովման պաշտպանված մասի վերծանում, ձևափոխում, արտատպում և տարածում:

9. Բանկն օգտագործում է Համակարգերով տվյալների փոխանցման անվտանգությունն ապահովող ժամանակակից և հուսալի միջոցներ: Այդուհանդերձ, Հաճախորդը Համակարգերն օգտագործում է իր ռիսկով և Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգերի օգտագործման հետ կապված խափանումների, տվյալների կորուստների, ինչպես նաև Համակարգերի օգտագործումից բխող Հաճախորդների տվյալների բացահայտման և Հաճախորդների ցանկացած այլ կորուստների և վնասների համար:
10. Համակարգերը տրամադրվում են դրանց հասանելիության պահին գործող պայմաններով և հնարավորություն են տալիս օգտվել փաստացի այդ պահին մատչելի գործառնություններից: Հաճախորդը տեղյակ է, որ կախված վճարային համակարգերի կանոններից և տեխնիկական հնարավորություններից, Քարտային և այլ հաշիվների, ինչպես նաև այլ գործառնությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ կարող են Համակարգում արտացոլվել կամ թարմացվել հետագայում: Հաճախորդներին առաջարկվող ծառայությունների ցանկն ու առանձին հնարավորությունները կարող են սահմանափակվել կախված Հաճախորդի համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցների հնարավորություններից, կապի որակից, Բանկի կողմից իրականացվող տեխնիկական սպասարկման աշխատանքներից և այլ գործոններից: Բանկը կարող է ավելացնել կամ պակասեցնել Համակարգերով մատուցվող գործառնությունների շրջանակը, ինչպես նաև դադարեցնել կամ կասեցնել Համակարգի մատչելիությունը, (ներառյալ՝ լուծել Համակարգի տրամադրման պայմանագիրը)՝ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու կամ այլ պատճառներով:
11. Համակարգերի միջոցով Հաճախորդի ներկայացրած հայտերի ուսումնասիրման արդյունքների, ինչպես նաև Հաճախորդի այլ գործառնությունների մասին Բանկը կարող է տեղեկացնել էլեկտրոնային եղանակով, ներառյալ՝ Համակարգը սպասարկող ինտերնետային էջերի կամ բջջային հավելվածների համապատասխան մասում տեղեկություններ տեղադրելով, էլեկտրոնային փոստով, բջջային հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների (SMS), Համակարգի բջջային հավելվածների կողմից ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով և այլ եղանակներով: Համակարգի միջոցով կատարված գործառնությունների մասին տվյալները պահպանվում են Բանկի սերվերներում և համարվում են ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման համար:
12. Բանկն իրավունք ունի Համակարգի միջոցով կատարվող գործառնությունների համար նախատեսել սահմանաչափեր, ինչպես նաև Հաճախորդի հանձնարարականներն ու ցուցումները կատարելիս իրականացնել Հաճախորդի ինքնության հավելյալ ստուգում՝ պահանջելով լրացուցիչ ձայնային կամ այլ հաստատում: Բանկը կարող է կասեցնել կամ դադարեցնել Համակարգ մուտք գործելու Հաճախորդի հնարավորությունը՝ սակագներով և այլ փաստաթղթերով նախատեսված վճարները չկատարելու, սույն Հիմնական պայմանների պահանջները խախտելու, ինչպես նաև Հաճախորդի նույնականության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքերում:
13. Համակարգի տրամադրման պայմանագրի լուծումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև առկա այլ պայմանագրային հարաբերությունների փոփոխմանը կամ դադարեցմանը, եթե գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
2. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է

Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	**16 միլիոն ՀՀ դրամ**	**7 միլիոն ՀՀ դրամ**	**16 միլիոն ՀՀ դրամ** (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	**7 միլիոն ՀՀ դրամ** (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,

ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին: